# Արձանագրություն թիվ 4

## ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

6 դեկտեմբերի 2018թ. ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ք.Հ.Մխիթարյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 15-ից 11 անդամները ,ինչպես նաև ուսումնական վարչության պետ Ա.Դավթյանը, մասնաճյուղի գիտական խորհրդի նախագահ Մ.Աթոյանը և ֆակուլտետի որոշ կուրսի ավագները:

*ՕՐԱԿԱՐԳ*

1. 2018-19 ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների , ընթացիկ քննությունների և քննաշրջանի ժամանակացույցերի քննարկում և հաստատում:/զեկ.Ա.Շ.Մարգարյան/
2. Ամբիոնների վարիչների ընտրություն: /զեկ.Ա.Շ.Մարգարյան/
3. Ընթացիկ հարցեր: /զեկ.Ա.Շ.Մարգարյան/

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը:Նա ներկայացրեց 2018-19թթ. ուստարվա առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկը,որը մանրամասն քննարկվել է ուսանողների և դասախոսների հետ, կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ՝ եղած առաջարկությունների հիման վրա:Վերջինս

համապատասխանում է ներկայացված բոլոր պահանջներին և բխում է ուսումնական պլաններից:

***<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-</u>*** Հ.Ասատրյանը նշեց, որ քննաշրջանի ընթացքում ամբիոնի բոլոր դասախոսները ուսանողներին գնահատելիս առաջնորդվեն իրենց կողմից փաթեթներում ներկայացված գնահատման չափանիշներով և հնարավորության սահմաններում ապահովեն տարբեր ուսանողներին միևնույն մոտեցումները:

***<u>ՈՐՈՇԵՑԻՆ</u>*** - գրաֆիկները ներկայացնել ուսումնամեթոդական վարչություն՝ հաստատման համար:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը, ով ներկայացրեց <<Գծանկարի, գունանկարի և քանդակի>> ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում առաջադրված Հ.Ասատրյանին և <<Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի>> ամբիոնում՝ Լ. Ֆլջյանին: Մասնավորապես նշեց , որ Հ.Ասատրյանը և Լ.Ֆլջյանը համապատասխան ժամկետներում ներկայացրել են բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը մասնաճյուղի որակավորման մանդատային հանձնաժողով , որից հետո ֆակուլտետի մրցութային հանձնաժողով և պարզվել է, որ վորոնշյալ թեկնածուները համապատասխանում են ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդներին ներկայացված պահանջներին, առկա է ամբիոնների նիստերի քաղվածքները, որտեղ հանգամալից քննարկվել և որոշումներն են կայացվել ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի կարծիքը / կցվում են արձանագրությանը/:

Այնուհետև նախագահողը ծրագրային ելույթի համար ձայնը տվեց Հ.Ասատրյանին , ով ներկայացրեց <<Գծանկարի, գունանկարի և քանդակի>> ամբիոնի զարգացման իր տեսլականը / կցվում է արձանագրությանը/:

Ներկաների կողմից Հ.Ասատրյանին հարցեր չառաջադրվեցին :

Հաջորդը ելույթ ունեցավ <<Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի>> ամբիոնի վարիչի թեկնածու Լ. Ֆլջյանը: Նա ներկայացրեց ամբիոնի զարգացման սեփական տեսակետը /կցվում է արձանագրությանը/,որից հետո Մ.Աթոյանի և Տ.Բագամյանի կողմից հնչեցրած հարցերին տրվեց սպառիչ պատասխաններ:

Այնուհետև սկսվեց քննարկումներ, որի ընթացքում ելույթ ունեցավ Ս.Հովհաննիսյանը, Մ.Հարությունյան, Մ.Մելքումյանը և Լ.Ղալումյանը: Ս.Հովհաննիսյանը առաջարկեց ֆակուլտետի ուսումնական գործնթացի արդյունքում ստեղծված արվեստի նմուշները „անցկացնել հուշանվերների խողովակով" առևտրայնացումը ապահովելու նպատակով, ինչպես նաև ակտիվացնել կապերը տեղական և հանրապետական համապատասխան կառույցների հետ:

Մ.Հարությունյանը առաջարկեց թարմացնել դիզայներական աշխատանքներ իրականացնելու համար օգտագործցող ժամանակակից էլեկտրոնային ծրագրերը՝ մասնավորապես ընդգրկել 3D max ծրագիրը:

Մ.Մելքումյանը առաջարկեց հզորացնել սրահներում տեղադրված համակրգիչների հզորությունները և ձեռք բերել նոր սարքավորումներ , որոնք կնպաստեն ուսանողների գործնական գիտելիքների և կարողությունների զարգացմանը:

Լ.Ղալումյանը առաջարկեց ավելի հաճախակի օգտվել Իջևանի պատկերասրահի հնարավորություններից և պատրաստակամություն հայտնեց համագործակցել մշակութային ծրագրերի շրջանակներում:

Քննարկումներից հետո Ա.Մարգարյանը ներկայացրեց փակ գաղտնի քվեարկության կարգը և առաջարկեց ֆակուլտետի գիտական խորհրդի անդամներից ընտրել երեք հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով.առաջարկվեցին Ա.Չիբուխչյանի, Է.Օթարյանի և Կ.Գոգինյանի թեկնածությունները, ովքեր էլ ընտրվեցին բաց քվեարկության արդյունքում: Հաշվիչ հանձնաժողովը իր կողմից ընտրեց նախագահ / Ա.Չիբուխչյան/ և ֆակուլտետի գիտական խորհրդի յուրաքանչյուր անդամին տրվեց մեկ քվեաթերթիկ, որի համար անդամները ստորագրեցին անվանացանկում: Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովը ամփոփեց արդյունքները, կազմեց արձանագրություն և բարձրաձայն հայտարարությամբ հաղես եկավ հանձնաժողովի նախագահ՝ Ա. Չիբուխչյանը, ով նշեց, որ <<Գծանկարի, գունանկարի և քանդակի>> ամբիոնի վարիչի թեկնածու Հ.Ասատրյանի օգտին ,,կողմ" քվեարկել են 11 մասնակիցնեից 10, մեկ քվաթերթիկ անվավեր է / նշումը բացակայում է/, իսկ <<Դեկորատիվ-կիրառական

արվեստի և դիզայնի>> ամբիոնումի վարիչի թեկնածու Լ. Ֆլջյանի օգտին ,,կողմ" քվեարկել են 11 մասնակիցներից 9, մեկ ,,դեմ'' և մեկ քվեաթերթիկ անվավեր է/նշումը բացակայում է/: Այնուհետև ֆակուլտետի գիտական խորհուրդը հաստատեց հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը /կցվում է արձանագրությանը/ և հայտարարվեց այն մասին , որ Հ.Ասատրյանը և Լ.Ֆլջյնաը ընտրվել են ամբիոնների վարիչի պաշտոնում, որի համար գիտական խորհրդի անդամները շնորհավորեցին ու ցանկացան բեղմնավոր աշխատանք:

***ՈՐՈՇԵՑԻՆ*** – 1.Հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը:

2. Քվեարկության արդյունքների հիման վրա ընտրված ամբիոնների վարիչների փաստաթղթերի փաթեթը ներկայացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդ՝ հաստատելու ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը:

Երրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ ֆակուլտետի գիտական խորհրդի նախագահ Ա.Մարգարյանը, ով նշեց , որ խորհրդի անդամ Ծ.Կարապետյանը տեղափոխվել է այլ բուհ, իսկ Կ.Գոգինյանը և Դ.Դավթյանը 2019թ.ավարտում են բուհը, ուստի նրանց փոխարեն ուսանողների կողմից առաջադրվել է ,,Դիզայն" երկրորդ կուրսի ուսանողուհի Իրինա Փիրումյանը,երրորդ կուրսի ուսանողուհի Կարինե Ալավերդյանը և առաջին կուրսի ուսանողուհի Անի Դավթյանի թեկնածությունները:

***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-*** Է.Օթարյանը նշեց, որ հարցը քննարկվել է ֆակուլտետի ուսանողական խորհրդի նիստում և արդյունքում ընտրվել են վերոնշյալ ուսանողները:

***ՈՐՈՇԵՑԻՆ*** – ֆակուլտետի գիտական խորհրդի նորացված կազմը ներկայացնել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենին հաստատելու այն:

**ՆԱԽԱԳԱՀ Ա. Շ.Մարգարյան**

**ՔԱՐՏՈՒՂԱՐ Ք.Հ.Մխիթարյան**